# CALFRESH-Ի ՎԵՐԱՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿ

•

•

• Ամսաթիվ `
Գործի համարը `
Գործի անվանումը `
Աշխատողի անունը `
Աշխատողի համարը `
Աշխատողի հեռախոսահամարը `
• Հասցեն `

Ձեզ տեղեկացրել էին, որ Ձեր CalFresh վկայագրի ժամկետն ավարտվում է ____________________-ին: Ձեզ հարցազրույց
ԱՄԻՍ/ՕՐ/ՏԱՐԻ
է հարկավոր, որպեսզի շարունակեք ստանալ CalFresh նպաստները: Սա Ձեր հանդիպման նամակն է Ձեր հարցազրույցի համար:

☐ Ձեզ նշանակվում է CalFresh-ի վերավկայագրման հեռախոսային հարցազրույց: **Եթե ցանկանում եք, որ հարցազրույցն անցկացվի դեմառդեմ, ապա խնդրում ենք զանգահարել վարչաշրջան վերոնշյալ հեռախոսահամարով՝ հանդիպում նշանակելու համար:**

| ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՄՍԱԹԻՎ՝ | ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԺԱՄ՝ |
|---|---|
| ՁԵՐ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ՝ | ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ՝ |

Մենք կզանգահարենք Ձեզ վերոհիշյալ հեռախոսահամարով: Եթե համարը ճիշտ չէ, ապա պետք է զանգահարեք մեզ և տաք այնպիսի համար, որով կարող ենք Ձեզ հետ կապ հաստատել հարցազրույցի համար: Շատ կարևոր է, որ կարողանանանք Ձեզ հետ կապ հաստատել: Կարող եք նաև տրամադրել այլ հեռախոսահամար, որին զանգելով՝ նույնպես կարող ենք կապ հաստատել Ձեզ հետ: Վարչաշրջանի հեռախոսահամարները կարող են արգելափակված լինել: Եթե Ձեր հեռախոսը չի ընդունում զանգեր արգելափակված հեռախոսահամարներից, ապա Դուք հնարավոր է, որ բաց թողնեք Ձեր հեռախոսային հարցազրույցի համար կատարվող զանգը. ըստ այդմ Ձեր նպաստները կուշացվեն: Եթե բաց եք թողել Ձեր նշանակված հարցազրույցը, ապա պետք է նոր հարցազրույց նշանակեք: Զանգահարեք վարչաշրջան վերոնշյալ հեռախոսահամարով կամ գնացեք վերոնշյալ հասցեով Ձեր հարցազրույցը կրկին նշանակելու համար:

☐ Ձեզ նշանակվում է CalFresh-ի վերավկայագրման դեմառդեմ հարցազրույց:

| ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՄՍԱԹԻՎ՝ | ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԺԱՄ՝ | | |
|---|---|---|---|
| ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝ | | | |
| ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՍՑԵ՝ | ՔԱՂԱՔ՝ | ՆԱՀԱՆԳ՝ | ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈԴ՝ |

## ԿԱՐԵՎՈՐ ՀԻՇԵՑՈՒՄՆԵՐ

- Այս հարցազրույցը չանցնելը կարող է ուշացնել կամ դադարեցել CalFresh-ի Ձեր նպաստները:
- Եթե չանցնեք Ձեր հարցազրույցն այս նամակում նշված ժամանակահատվածում, ապա Ձեր պարտականությունն է նոր հարցազրույց նշանակելը:
- Ձեր պայմանավորվածությունը փոխելու համար զանգահարեք վարչաշրջան:
- Պահանջվող վավերացումը պետք է ներկայացվի վարչաշրջանի կողմից այն խնդրելուց հետո 10 օրվա ընթացքում: Խնդրում ենք ասել վարչաշրջանին, եթե Ձեզ օգնություն է հարկավոր այս տեղեկությունը ստանալու համար: Վարչաշրջանը կարող է օգնել Ձեզ ստանալ այն:

**ՆՇՈՒՄՆԵՐ.**